ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԻՇՄԻՇԵԱՆՑԻ

II [1])

Վրաց և մեր ուրիշ դրացի ազգերի մէջ սրբազան ծառերի և անտառների մեծարանքը նոյնպէս շատ էր տարածուած։ Արիսաղները, չէրքէզները, մինգրէլները լայնի տեղերում ունէին իրանց սրբազան վայրերն, ուր զոհաբերութիւն էին անում, պահպանելով այդ վայրերը մեծ պատուով։ 1889 թ. Դիննիկ ճանապարհորդը զարմացմամբ տեսել է Վերին Օսէթիայի Ստուր Դիգորի առվի մօտ մի փոքր տարածութեան վերայ մի այդպիսի սրբազան անտառ, մինչդեռ շրջակայքը ներկայացնում էր սոսկ մերկութիւն։ Այդ անտառի ծառերը՝ Դիգորեցւոց օրէնքով, ոչ ոք իրաւունք ունէր կտրել. ծառի չորացած ճիւղերն անգամ հասարակ մահկանացուն իրաւունք չունէր վերցնել. որովհետև այն պատկանում էր հողևորական անձանց՝ քահանային կամ եկեղեցւոյ միաբաններին» [1]).

Աւանդութիւնն ասում է որ Ս. Նունէն երբ գալիս է Մցխէթ և նորաաղօթքներով Աստուած կործանում է Արամազդայ արձանը, այն ժամանակ նա գնում է այդ քաղաքի արևելեան կողմով դէպի մի լեռնային վայր, ուր հին ժամանակում եղել է մի բերդ և քաղաք։ Այստեղ գտել է մի դեղեցիկ բարձր և բազմոստ ծառ, որ կոչւում էր բրինջի—փուշնի ծառ։ Այս ծառի տակ երբեմն հանգչում է եղել Բարթամ թագաւորը և այստեղ Ս. Նունէն աղօթում է վեց օր շարունակ [2]).

Թագաւորական ալգիում Ս. Նունէն երազում տեսած լուսաճաճանչ երիտասարդի որոշմամբ վերցնում է մայրերի ստերում բուսնող այն ծառի

---

[1]) Տե՛ս «Մուրճ» № 2։

[1]) Ցիշատակարան Կայսերական Ռուսաց աշխարհագրական Ընկերութեան Կովկասու բաժնէ, գիրք XIV, գրքոյկ առաջին։

[2]) Բրոսսէ. «Պատմութիւն վրացոյ»։

տակից հող և տալիս է իւր ամուլ տանտէրերին ուտելու։ Այն ժամանակ նոցա զաւակ է չծորհւելը։

Քրիստոնէութեան նոր մտած ժամանակին, երբ մարդիկ դեռ ևս բոլորովին չէին ազատ կռապաշտութեան ազդեցութիւնից և դարձեալ հակումն ունէին դէպի նախնի խորհրդաւոր աւանդութիւնները, նոքա ամենապարզ վիճակներն անգամ սովոր էին բացատրելու հեթանոսական հոգւով։ Այսպէս երբ Մցխէթի տաճարը շինուեց և նորա օծման համար հրաւիրուեց Յովհաննէս եպիսկոպոսը, աւանդութիւնն ասում է, որ սրբազանն ուշադրութիւն է դարձրել մի զեղեցիկ հոտաւէտ ծառի վերայ, որ կանգնած է եղել մի բարձր և անմատչելի ժայռի գլխին։ Սա հրաշագործ ծառ էր. եթէ նետով վիրաւորուած մի կենդանի ուտէր նորա տերևները կամ սերմերը, ըժշկւում էր, մինչև անգամ եթէ վիրաւորուած լինէր կենդանու ամենավտանգաւոր տեղը։ Որովհետև հեթանոսներին զարմացնում էր այս հանգամանքը, ուստի նոքա մատնացոյց են արել այս ծառը Յովհաննէս եպիսկոպոսին։ Եպիսկոպոսը հրամայել է կտրել ծառը և նորանից խաչ շինել։ Երբ այս հրամանը կատարւում է և տասը տասնեակ մարդով բերւում է Մցխէթ, այդ ծառը, չը նայելով ձմեռային ժամանակին, կանաչում է։ Մարտի 25-ին կտրում են ծառը, բայց նա իւր դալարութիւնը պահպանում է 37 օր, այսինքն մինչև մայիսի 1-ը, երբ նորանից խաչ են շինում։ Այս խաչը շատ հրաշքներ էր գործում ասում է աւանդութիւնը։

Նոյնպիսի հնադոյն առասպելական աւանդութիւններին պէտք է վերաբերել Լիբանանու մայր ծառի մասին եղած հետևեալ պատմութիւնը, որ պէտք է մի ճգնաւորի հնարած համարել։

«Երբ Ադամի որդին Սեթը մեռնող հօր պատէրով գնում է դրախտից ողորմութեան հողը բերելու համար՝ այդ վիճակեղ պարտիզի դռները բացւում են հրեշտակի ձեռքով որ թոյլ չէ տալ նորան այնտեղ ներս մտնելու. նա տեսնում է Լիբանանու մայր ծառը՝ դէպի երկինք ուղղած ոստերով։ Ծառը կարծես ցոյց էր տալիս այն մեծ տարաբաղդութիւնը, որին ենթարկւեց Ադամը մեղանչելուց. նա չունէր կենդանութիւն՝ տերևաթափ էր, բայց կենդանութեան լոյս էր տալիս, որովհետև ծառի գագաթին նստած էր վայրուն զգեստով մի մանուկ՝ լուսոյ նշան բոլոր ապագայ սերնդոց համար»։

Այս առասպելաիառն զրոյցը ցոյց է տալիս թէ հին ժամանակներում ինչ մեծ լարգ և պատիւ էր վայելում Լիբանանու մայրին, որից կառուցւել է Սիոնի տաճարը։

Նոյն ժամանակին է վերաբերւում խորհրդաւոր պատմութիւնը խնձորի մասին։ Այդ պտղի մասին առասպելներ կային ամենայն ժամանակներում և ամեն ազգերի մէջ։ Յունաստանի առասպելական Աֆրոդիտէն և Ս. Գրոց Եւան պատկերանում են մեղ այդ պտուղը ձեռքներին։ Մի առասպելի մէջ խնձորի պաշտպան է հանդիսանում օձը, միւսի մէջ՝ վիշապը։ Բոլոր արա-

բական առակները՝ վերջանում են երկնից իջնող երեք խնձորով։ Ողիսևան այդ պտուղը ձեռք բերելու համար մտնում է Ալկինոյի պարտեզը։ Եղդալի մէջ (նախնի հիւսիսային գերմանական ժողովրդոց դիցաբանութեան ժողովածուն) ասւում է որ Իդունան պահապան է խնձորի, որ դիք երիտասարդանալու համար ուտում են։ Ազրայելը՝ մահւան հրեշտակը, իւր նիւրակութիւնը կատարում է խնձորը քթի տակին պահելով։ Հիւսիսային աղգերի առասպելաբանութեան մէջ՝ խնձոր ուտելուց քիթն երկարում է և իբր լեռով իւր նախկին չափն է ստանում միայն տանձի օգնութեամբ։ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցի ժողոված առակների մէջ կայ մի առակ՝ որ պատմում է թէ թագաւորի աղջիկն իւր նաժիշտներով էշ են դառնում մի մեծ խնձոր ուտելուց և ապա նորից իրանց նախկին կերպարանքն են ստանում մի այլ, բայց աւելի փոքր չափով, խնձոր ճաշակելով [1]։ Նոյն եպիսկոպոսը Տիգրիս գետի ակունքները այցելելու միջոցին լսում է հետեւեալ աւանդութիւնը խնձորի մասին. «Ամեն տարի, Համբարձման տօնին, առաւօտ, անմահութեան խնձոր մի հրեշտակներէն կը դրուի այս ական ջրի մէջ, ուր ամենէն կանուխ հասնողն միայն կը տեսնէ. բայց երբ ձեռն կը կարկառէ առնելու, խնձորն այլ ևս չերևիր։»

Սակայն ամենից նշանաւորն է անուանադիկը (պասսիֆլորան) որ կրօնաւորների երևակայութեամբ պարունակում է իւր մէջ Քրիստոսի չարչարանաց ժամանակ գործ դրւած բոլոր գործիքների նման մասեր՝ խարազան, մուրճ, բեւեռներ, փչեալ պսակ, գեղարդ, մինչև անգամ տասն առաքեալներ բացի մատնիչ Յուդայից և ուրացող Պետրոսից։ Լուսաստանի հարաւային նահանգներից մէկում այդ ծաղկի ծագման մասին հետեւեալ աւանդութիւնը կայ։

«Այդ շաբաթ օր իւղաբեր կանայք դնում են եղել դառնաղէս ողբալով։ Սոցա պատահում է մի հեթանոս կին և հարցնում՝

—Ո՞ւմ համար էք ողբում։

—Մեր փրկիչ Քրիստոսի համար, որ չարչարուեց մարդկային աղգի համար, պատասխանել են իւղաբեր կանայք և սկսել են պատմել հեթանոս կնոջ թէ ինչպէս Տէրն մեր Յիսուս Քրիստոս չարչարուեց մարդկային աղգի համար և թէ ինչպէս նա իւր արիւնով քաւեց նախահոր մեղքերը։

Հեթանոս կինը լուռուած բացականչում է՝ մեծ է Տէրն մեր Յիսուս Քրիստոս և քարի վերայ նստած ցաւելով դառնապէս ողբում է իւր մեղքերը։ Նորա թափած արտասուքի կաթիլները չիթ չիթ գլորուում են հղել հողի վերայ և ծիլ արձակում գետնի մէջ։ Հեթանոս կինն այնքան կոծում և ողբում է, մինչև երկնից ձայն է գալիս՝ թող ներւի քեզ քո մեղքերն և քո արտասուքից մի ծաղիկ բուսնի, որ ծանուցանելու է աշխարհին Աստուածորդի Յիսուս Քրիստոսի չարչարանքը։ Այդ միջոցին բուրում է.

---

[1]) «Թիֆլիսու Դուռնա-Գեօղլի», Համով-Հոտով երես 225, Կ. Պոլիս. 1884 թ

անուշահոտութիւն և հեթանոս կինը տեսնում է որ իւր շուրջը փթթել են գեղեցիկ ծաղիկներ»։

Այդ ծաղիկներն էին պասիֆլորաներ են՝ չարչարանաց ծաղիկներ, որ ըստ աւանդութեան կրում են իւրեանց մէջ Քրիստոսի չարչարանաց վերն վիշած բոլոր գործիքները։

Մի ալ բոյս, որ նման է առուտին և բուսնում է միայն Արևելքում, նոյնպէս մեծ պատիւ էր վայելում, որովհետև իւր տերևների վերայ եղած բծերով և փշալից պտուղներով վիշեցնում էր Փրկչի մարմնոյ խոցոտած տեղերը։

Դենասարէթից դէպի արևմուտք, Զիթենեաց լեռը շրջապատող հովտում բուսնում են շատ տեսակ շուշաններ և սորա նման բոյսեր, ուստի դժուար է ասել թէ իսկապէս որ բոյսի մասին է խօսում Փրկիչը ժողովուրդն ուսուցանելու ժամանակ։ Հռչակաւոր բուսաբան Սմիթը կարծում է թէ այդ բոյսն ամարիլլեակն է, որի ոսկեդոյն ծաղիկները «Սողոմոնի հանդերձից» փայլուն են. միւս բուսաբանները հաւանակութիւն են տալիս, որ այդ պէտք է լինի Բիւզանդիոյ շուշանը կամ կարմիր մարտագոնն, որ Գալիլեայի շատ տեղերում բուսնում է դարնան սկզբներում, այսինքն այն միջոցին, երբ Քրիստոս լերան վերայ խօսեց իւր առակը։ Մարտագոնի բրդաձև ծաղիկները շատ գեղեցիկ են և հեռու տեղից էլ երևում են։

Միջնադարեան կրօնաւորները մեծ խնամքով պահպանում էին հովտաց շուշանը, կարծելով թէ սա այն ծաղիկն է, որի մասին խօսում էր առակով Քրիստոս լերան վերայ։ Իսկ Անգլիայում այդ ծաղիկն ունէր անարատութեան նշանակութիւն և համարւում էր սրբազան։ Սուրբ Լէօնարդի վարուց պատմութեան մէջ, ուր նկարագրւում է վիշապի հետ երեք որ նորա վարած արիւնահեղ պատերազմը, այդ սրբոյ արեան թափւած տեղում բուսել են հովտաց շուշաններ, որ այժմ էլ կան Ս. Լէօնարդի անտառում։ Հովտաց շուշաններ հարաւային Եւրոպայից բերած են Անգլիա շատ հին ժամանակից և երկոտասան և երեք տասան դարերում այդ ծաղիկը գործ էր դրւում եկեղեցիներ զարդարելու համար։ Սակայն երբ սուրբ Դոմինիկոսը վերջերում հաստատեց եկեղեցիները վարդերով զարդարելու սովորութիւնը, այն ժամանակ հովտաց շուշաններով զարդարում էին միմիայն Սուրբ Կոյսի մատուռները դարնան ամիսներում։

Վարդի ծագման մասին կայ կրօնաւորների հնարած հետևեալ առասպելը. պատմում են իբր թէ բեթղէհեմցի մի քրիստոնեայ կին՝ դատապարտւած լինելով խարոյկի վերայ այրւելու, աղաչել է Աստուծուն պահպանել իրան։ Այդ իսկ միջոցին այրւող փայտերը փոխարկւում են կարմիր վարդերի, իսկ չայրւող փայտերը՝ սպիտակ վարդերի։ Այսպէս ծագումն է առել վարդենին կարմիր և սպիտակ վարդերով ի միջատակ և ի խրատ մարդոց, թէ կարմիր վարդերը մարտիրոսաց ծաղիկներ են, իսկ սպիտակները՝ Ս. Կոյսի նշանակ։

Կայ մի աւանդութիւն որ իբր Մահամէդն է ստեղծել վարդերը։ Սակայն

Յոյների աւանդութեամբ կարմիր վարդն իւր գոյնն ու անուշահոտութիւնն առել է Աստղիկ դիցուհուց։ Մի օր դիցուհին՝ սպիտակ ծաղիկներ քաղելիս, վիրաւորել է իւր մատն և մի կաթիլ արիւնով այդ ծաղիկը կարմիր գոյն է ներկւում. իսկ դիցուհու որդի Կուպիդոնը՝ հաւանելով վարդը, դրօշմում է նորա վերայ մի համբոյր, որից այդ ծաղիկը ստացել է իւր այժմեան անուշ հոտը։

Յոյները շիրիմներ զարդարելու համար գործ էին ածում թաւրնջակ, կոլացնծուկ, նեխուր և մրտենի։ Վարդը նոյնպէս գործ էր դնւում միայն թաղման հանդէսներին։ Ճենացիք տնկում են վարդի թփեր գերեզմանների վերայ։ Վերին Գերմանիայում դագաղի վերայ յաճախակի դնում են վայրի մեխակներ, մինչդեռ ֆրանսիացիք հանգստարաններում չիմշատին են գործ ածում։ Զւիցերիայում և Իտալիայում այս նպատակի համար ծառայում է կուսածաղիկն ու Իտալիայի շատ տեղերում մինչև անգամ կոչւում է «ննջեցելոց ծաղիկ»։

Ծաղկազարդին գործ դրւած ուռենու ոստերը՝ Փրկչի Երուսաղէմ մտնելիս ժողովրդի նորան դիմաւորելու յիշատակն են։ Կաթոլիկ եկեղեցիներում ուռենու փոխարէն գործ են ածում չիմշատի ոստեր։ Ուռենի գործ ածելու սովորութեան մասին զանազան բացատրութիւն են տալիս. մի քանիսն ասում են որ ուռենին հին ժամանակում գործ էր դրւում իբր վշտի նշանակ ննջեցելոց վերայ, ինչպէս երեւում է այդ Վիրգիլիոսի երկասիրութեան մէջ, ուր յուէրժահարսներն և հովիւները նկարագրւած են ուռենու տակ նստած՝ իւրեանց սիրեցեալների մահն ողբալիս։ Միւսները կարծում են որ Ծաղկազարդին ընձիւղացած է լինում միայն ուռենին, ուստի այդ տօնին սովորութիւն է դարձել արմաւենու ոստերի փոխարէն գործ ածել այդ ծառի ոստերը։

Մշտադալար բոյսերից՝ սզոցին, բաղեղն ու մզամուճը գործ են ածում Անգլիայում ծննդեան տօնին։ Հին ժամանակներում մզամուճը խորհրդաւոր բոյս էր համարւում։ Նախնի գալլիացիք առանձին նշանակութիւն էին տալիս դորան։ Նոյնպէս և նախնի գերմանացիք խորհրդաւոր պատմութիւն էին անում նորա մասին։ Այսպէս արեգակի և ամարան բարի աստուած Բալդուրը յաղթում է մութ և չար Լօքին՝ գիշերի և ձմրան թագաւորին։ Լօքին երդւում է այսուհետև Բալդուրին չը վիրաւորել այնպիսի մի զէնքով որ շինած լինի ամառը կանաչող երկրի վերայ կամ ջրի մէջ բուսած բոյսից։ Այսպէս երդւելով չար Լօքին միևնոյն ժամանակ մտածում է եղել վրէժխնդիր լինելու։ Մզամուճը կանաչում է ձմեռն և չէ բուսնում ոչ երկրի վերայ և ոչ ջրի մէջ։ Լօքին շինում է նորանից վտանգաւոր մի նետ և վիրաւորում է արեգակը, այդ օրւայ և ամարան փայլուն աստուծուն այնքան ծանր, որ Բալդուրն երկար ժամանակ մահճի մէջ է մնում և միայն աստուածների հօր Վադանի բժշկարար կարողութեամբ նա կրկին առողջութիւն է գտնում։

Սրբազան էր համարում այն կաղնին, որի վերայ բուսնում էր մղամունձը։ Քրմապետները բնակւում էին կաղնեաց անտառներում. կաղնու ոստերն ու տերևները դործ էին ածում բոլոր կրօնական հանդէսների ժամանակ. զոհաբերութիւնը կատարում էին այդ տեսակ կաղնիների տակ։ Նոյն իսկ մղամունձն, որ բուսնում էր կաղնու վերայ, մեծ պատիւ էր վայելում և համարւում էր երկնային պարդև։ Այդ բոլորը կատրում էին ծառից մեծ հանդէսով աարւայ առաջին լուսնի վեցերորդ օրը։ Ծառի տակ կանդնացնում էին երկու նոր լծի վարժեցրած սպիտակ արջառ։ Զոհաբերութիւն կատարող դրուիդը (քրմապետ) սպիտակ հանդերձ հագած բարձրանում էր ծառի վերայ և կտրում էր մղամունձը ոսկեայ մանդաղով։ Ծառի տակ սփռած սպիտակ կտաւի վերայ ընկնում էր այդ բոլոն, որ յետոյ բաժանում էին ներկայ եղողներին։ Արջառները զոհւում էին, աղաթելով որ մղամունձը բարեյաջող ազդեցութիւն ունենայ։ Մղամունձից ըմպելիք էին պատրաստում, որ համարւում էր ամենայն տեսակ թունի համար դեղթափ և հիւանդութիւնների բուժող։ Այս ըմպելիքը դործ էին ածում նոյնպէս պտղաբերութեան համար։ Մղամունձի ոստը համարւում էր ամենայն տեսակ հիւանդութիւնների դարման։ Եթէ մարմնի ցաւած տեղը մղամունձի ոստ քսէին, մարդս ապաքինւում էր։ Մինչև այժմ Անդլիայում իւրաքանչիւր տարի սեննակի առաստաղից կախում են մղամունձի ոստեր և դործ ածում դանադան խաղերի համար։ Նոյնպէս Գերմանիայի մի քանի տեղերում մնայել է հին սովորութիւն՝ լուսնվարի 9-ին, այսինքն այն օրն երբ արևդակի աստուծու իշխանութիւնը սկսում է աւելանալ, մարդիկ քսում են իրանց մարմնին մղամունձի կանաչ ոստերը, բայց այժմ դորա փոխարէն մեծ մասամբ դործ են ածում մախրիի (եղևնու) ոստը։

Նոյն իսկ կաղնին ըստ աւանդութեան հիւանդութիւնների բուժող է համարւում։ Օրինակ՝ Ղրիմում, թաթարների Բէիւք-Սէլեան կոչւած գիւղի մի պարտէզի մէջ կայ մի մեծ կաղնի ծառ, որի մասին հետևեալ աւանդութիւնն են պատմում։ «Եղել են իբր երկու եղբարք, որոնցից աւագը լինում է գիտնական և հնախոյզ, իսկ կրտսերը՝ լոկ մի բարի տղամարդ։ Այս կրտսեր եղբայրը ապրում է եղել իւր աշխատանքով և երբէք չէ եղել դիմում իւր հարուստ եղբօր օգնութեան։ Երբ սա հասակն առնում է և նշանւում և հարսանեաց օրը որոշւած է լինում, լանկարծ նորա նշանածը հիւանդանում է։ Բժիշկները հիւանդից ձեռք են վերցնում. փեսային միակ լոյսն է մնում խնդրել աւագ եղբօրից նորա հրաշագործ թալիսմանը։ Աւագ եղբայրը մերժում է տալ նորան թալիսմանը, որովհետև նորա սրտով չէր այդ ամուսնութիւնը։ Կրտսեր եղբայրը փորձում է յափշտակել նորանից այն մի կտոր վայրը, որից կախւած է եղել իւր նշանածի կեանքն ու իւր ապաղան։ Փորձը յաջողւում է. փեսայուն թալիսմանը ձեռքին արդէն շտապում է դէպի իւր նշանածը, բայց ճանա-

պարտի կիսին եղբօր մարդիկը հասնում են նորան։ Օրն անձրևալին է լի-նում, կրտսեր եղբայրը՝ զայրացած վայր է ձգում և ոտնակոխ անում այն կտոր փայտը։ Սորանից բուսնում է մեծ կաղնու ծառ, որի կեղևով ցաւժմ բժշկւում են թաթարներն և դէպի այդ հրաշագործ կաղնին ունեցած հաւատն ազատում է նոցա շատ ցաւերից։ Կան այնպիսի հիւանդութիւններ, որ թաթարների աւանդութեամբ բժշկւում են միայն նոյն ծառի տակ քուն մտնելով։

Ամենախորհրդաւոր բոյսերից մէկը պէտք է համարել լօշտակ բոյսը։ Հրէաներն այդ բոյսի արմատը հանելու համար՝ կտրում էին բուն արմատից ճիւղերն և դուրս էին քաշում արմատը գետնից։ Այդ միջոցին արմատը սաստիկ ձայն էր արձակում, որով կարող էր սպանել ամեն մէկին։ Այս պատճառով արմատը հանելիս խորհուրդ էր տրւում պինդ խցել ականջները և արմատից կապել մի շուն, իսկ շրջապատողները փախչելով կանչում էին շանն և նորանից առնում արմատն. այդ միջոցին շունն իսկոյն սատկում էր։ Այն աւանդութիւնը կայ նաև Արարատեան գաւառում։

«Լօշտակ անունով բոյս մը ելել Մշոյ աշխարհին մէջ, ասում է Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցը [1]), լաճախ կը գտնւի առաւելապէս Ս. Կարապետի վանքին բոլորը, մացառներու մէջ կարձակէ իւր ոստերը, որոնք կը բարձրանան և կը պատատւին վայտերուն և անոնց թանձրախիտ տերևներուն, կը խառնեն իրանց լայն տերևները, որոնք ձեւով նման են խաղողի որթի տերևի, իրանց ցօղունը նման է որթի բարուենակի և խաղողի ողկոյզի ալ շատ նման ողկոյզներ ճութ-ճութ կը կախէ, միայն թէ անոր պտուղները մանրիկ են քան զխաղողին։ Այս այն բոյսն է, որոյ արմատը մարդանման ըլլալ կը համբաւեն և թէ մինչև անգամ անոնց մէջ արուն և էգն ալ լայտնի են։ Թէ՝ այս արմատը հանելու համար լատուկ աղօթ մը ունին [2]) և թէ՝ երբ կը կտրեն իւր միւս կտորներէն, ահագին ձայնով կը ճչայ՝ այն ուլը կամ հաւը անոր ձայնին զոհ լինի, եթէ այդ հնար չը լինի, արմատ հանող մարդը պիտի մեռնի։ Ամենավերջին սաստիկան դառնութիւն ունի այդ արմատը և իր. կերպ ցաւոց ու ախտից դարման է [3])։ Բաւական փափագանօք և թանգ գնով կը գնեն դայն Նոր-

---

[1]) «Գրոց-բերոց» Կ. Պոլիս, 1874 թ., երես 32—33.

[2]) Այս աղօթքն էլ տպւած է նոյն Հէրէնակի «Մանանայ» խորագրութեամբ գրքի մէջ, երես 327։

[3]) Մի.ք. Ռէստենի բժշկականութեան մէջ (Վէնէտիկ, 1822 թ. հ. 2, երես 343) ասւած է՝ «Լ փոշւոյ սորա (արմատի) կազմեն դեղ ազդողական ընդդէմ խելագարութեան, լուսնատութեան, ջրդողութեան, երկաբաեռ ախտից և հիւանդութեանց. վի է թուլացուցիչ, ուժգին լուծողական, ծիգաբեր և գրգռիչ բնութեամբ։ Այլև սատակէ զՃՃիս որովայնի, լուծանէ զխցանս մարմնոյ և միանգամայն սթափէ զթմրեալ մարմնոյ։ Նոյնպէս օգտաւէտ է ընդդէմ շնչարգելութեան, այտուցից և զակատութեան ամսական պարբերաբար կանանց»։

Նախիջևանէն և Հին-Խրիմէն և այլ կողմերէն Մշոյ Ս. Կարապետ եկող ուխտաւորներ։

Մի Նամակի մէջ, որ գրուած է 1675 Թ. լէյպցիգեցի մի բնիկ քաղաքացուց իւր եղբօրը Բիզա, կան մի քանի նկատողութիւններ որ ցոյց են տալիս թէ այդ ժամանակ որպիսի թերահաւատութեամբ էին վերաբերւում մարդիկ դէպի այդ մարդանման արմատը։ Նամակի մէջ գրուած է՝ թէ քո տնային գործերը շատ ողբալի վիճակի մէջ են, քո որդիքը, խոզերն, ոչխարներն և ձիաները մեռել սատակել են, գինիդ, գարեջուրդ նկուղի մէջ թթուել են և թէ դու կնոջդ հետ ապրում ես անհաշտ։ Այս պատճառով առաջարկում է եղբօրը հետևեալ դարմանն այդ փորձանքի դէմ, որ յառաջ է եկել չար մարդկանցից։ Եթէ գտնես լօշտակ և Ներս տանես տունդ, բոլորը կարգի կը գայ։ Այդ փորձանքից եղբօրն ազատելու համար, ինքը գնել է վաթսուն և չորս տալէրով և ուղարկել է Նորա համար լօշտակն և սորա գործածելու համար հետևեալ պատուէրը. «լօշտակը տուն տարած ժամանակը երեք օր թող հանգիստ և մի մօտենար Նորան։ Յետոյ դիր այն տաք ջրի մէջ և այդ ջրով սրսկիր տաւարդ, տան շէմքն և ամենայն ինչ և եթէ լօշտակի հետ կարգին վարուես, բոլորը լաւ կը լինի։ Տարին չորս անգամ լողացրու լօշտակը և ամեն անգամ լողացնելուց յետոյ փաթաթիր այն կերպասի մէջ և պահիր ամենաթանգագին իրերի հետ և այլ ես քեզ ոչինչ հարկաւոր չի լինիլ։ Մանաւանդ բարեբեր է այն ջուրն որի մէջ լողացրել ես լօշտակը։ Դատաստան երթալիս լօշտակը դիր աջ ձեռքիդ անթի տակ և յաջողութիւն կունենաս թէ արդարութեան և թէ անիրաւութեան մէջ»։

Լօշտակի զօրութեան և հրաշագործ յատկութիւնների մասին շատ վրոյցներ կան մինչև այժմ Ֆրանսիայում և Գերմանիայում։

Ֆրանսիական մի երկասիրութեան մէջ, որ գրուած է 1718 Թ., պատմւում է թէ մի գիւղացի ունեցել է լօշտակի արմատ մարդու կերպարանքով. այս արմատը Նա ձեռք է բերել մի դնչուից։ Գիւղացին թաղել է արմատը լուսնի և աստղիկի բաղդաւոր միաւորութեան միջոցին, գարնան, երկուշաբթի օրն և այն տեղում թափել է կաթն որի մէջ խեղդել է երեք դաշտային մուկ։ Մի ամսից յետոյ արմատն առաջուանից աւելի Նմանել է մարդու։ Յետոյ լօշտակն ազաւնիի բոյսի հետ դրել է հնոց և ապա փաթաթելով լօշտակը պատանքի մէջ, այսպէս պահպանելիս է եղել. այդպիսով գիւղացին միշտ յաջողութիւն է ունենում թէ որսի և թէ իւր միւս գործերում։

Լօշտակի մասին Եւրոպայի շատ երկիրներում մնացել են շատ աւանդութիւններ։ Նորա արմատի կտորներն իբրև թալիսման պահպանում են սիրոյ դէմ, կամ իբրև միջոց տնային ոգիների դէմ, կամ իբրև պահապան չար մարդկանց և դևերի դէմ, Նաև իբրև դարման հիւանդութիւնների դէմ։

Չինաստանում Թէյի մասին հետևեալ աւանդութիւնը կայ. «Դասմայի

մոտ 519 տարին՝ հնդկաց թագաւորի որդին գնացել է Ճենաստան բուդդականութիւնը քարոզելու համար, Երիտասարդ քարոզիչը վարելիս է եղել ճգնաւորի կեանք՝ կերակրուելով միայն դաշտային ծաղիկներով. նա վճռել է երբէք չը քնել։ Երկու տարի նա վարել է այս տեսակ կեանք. բայց մի անգամ նա լողնած ժամանակ՝ մոռանալով իւր խոստումը խորը քուն է մտել։ Թնից զարթնելով նա շատ վշտացել է որ դժրել է իւր խոստումն և իրան պատժելու համար խուզել է լօնքերն և անիծելով ձգել է գետին։ Քարոզիչը զարմացմամբ նկատել է որ լօնքերը մի ժամից յետոյ փոխարկուել են մինչև այդ օրն իրան անծանօթ բոյսի տերևների։ Ճաշակելով այդ տերևները, գտել է նոցա համեղ ու կազդուրիչ և առաջարկել է հաւատացեալներին գործ ածել այդ նոր բոյսը, որ այդ օրից թէյ անունով զարձել է Ճենաստանի մէջ գործածական խմիչք։

Այսպէս ամենայն ժամանակ ծաղիկները, բոյսերը կամ սոցա մի քանի մասերը միշտ ունեցել են որ և է կապ մարդկային բանական կեանքի հետ։ Ծաղիկների անունների, գոյնի, հոտի և տեսքի վերայ լօրինուած են երգեր և կամ նոցա վերագրած է գերբնական զօրութիւն։

Հայերիս մէջ էլ, իրրև դարաւոր կեանք վարելած և հոգևոր զարգացման ամենայն աստիճաններն անցած մի ազգի մէջ, նոյնպէս կան աւանդութիւններ կամ վէպեր բուսական թագաւորութեան ներկայացուցիչների վերաբերեալ։ Ինչպէս տեսանք հեթանոսական ժամանակներից սկսած բոյսերը պակաս դեր են խաղացել հայերի հոգևոր կեանքի մէջ։

Երբ մեր մէջ տարածուեց քրիստոնէութիւնը, այն ժամանակից ի հարկէ ծառերի և բոյսերի մեծարանաց նշանակութիւնն էլ պէտք է որ փոխուէր աւետարանական լոյսի ազդեցութեան տակ։ Բարտի և սորա նման ծառերն եթէ հեթանոսական ժամանակներում մարդիկ համարում էին չար ոգիների կամ դևերի ապաստանարան, քրիստոնէութեան տարածելու միջոցին այդ ծառերը պէտք է որ փոխէին իրանց դերը, դառնալով սրբազան վայրեր սրբերին ծառայելու համար։

Մարդկային ազգի այս թուլութիւնն և հեթանոսական սովորութիւնների պահպանելու ոստիկ ձգտումը լաւ ըմբռնելով՝ մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչը ջանացել է հաստատել և արմատացնել Հայաստանի մէջ աւետարանական ճշմարիտ լոյսը՝ կործանուած մեհեանների տեղ Աստուծու տաճարներ կանգնեցնելով և հեթանոսական տօնախմբութիւնները սրբոց տօների փոխարկելով։ Այսպէս նաւասարդի տօնը նուիրեց նա Ս. Կարապետին և Աթանագինէս եպիսկոպոս վկային, որոց նշխարքը բերելով Կեսարիայից և Սեբաստիայից, Տարոնոյ (Մուշ) երկրում շինեց Ս. Կարապետի տաճարը։ Նոյնպէս Անահտայ մեհեանի տեղը կանգնեցրեց Ս. Աստուածածնայ եկեղեցի և այլն։

Այս իսկ պատճառով Հայաստանի այն տեղերում, ուր հնադոյն ժամանակում կար հեթանոսական որ և է սրբավայր, այնտեղ ժողովուրդը

չինեց իւր աղօթարանը։ «Տեսնաս ձորի մը մէջ, ասում է Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց, բոլ մի ծառ և աղբիւր մը. աւերակ մը հոն։ Գեղեղման մը այս բլուրի վերայ. խաչքար մը այն ինչ տեղ։ Ամէն տեղերն ալ ուխտի կերթայ Մշոյ ժողովուրդ, առանց գիտնալու թէ ինչ կայ այն տեղ։ Բայց մտածողին խորհիլ կուտան, թէ այն տեղերը՝ կամ մեծ լիշատակ մ'է կատարուած, կամ մեծ նահատակ մ'է ինկած, կամ հրաչք մ'է տեսնուած» [1]։ Ահա այդ տեղերում կան սրբազան ծառեր կամ թփեր, մեծ մասամբ չէն և կիսաւէր եկեղեցիների մօտ, որ հեթանոսական ժամանակում զուցէ ունէին իրանց որոշ նշանակութիւնը, իսկ այժմ ժողովուրդը՝ քրիստոնէութեան աղդեցութեան տակ, համարում է սրբի բնակարան կամ օթեան և մեծարում է ուխտադնացութեամբ։ Այդ ծառերի և թփերի վերայ կախուած կան շորի կտորներ, բժժանքներ և այլ իրեր, որ նուիրել են ուխտաւորներն իրանց ցաւից բժշկուելու մտքով։ Տէլլօր գիտնականի վկայութեամբ՝ շատ աղգեր, մինչև անդամ եւրոպացիք, աւանդութիւն ունին որ կարելի է աղատուել հիւանդութիւնից տալով այն ուրիշ անձի կամ առարկայի։ Սորա համար հարկաւոր է տալ ուրիշին կամ կախել ծառից հիւանդին պատկանող կամ նորա վերայ եղած որ և է իր. Այս է իսկ պատճառը, որ սրբազան վայրերում գտնուող ծառերն ու թփերը զարդարուած են հիւանդի հագուստից վերցրած կտորներով և այլ իրերով։

Հայաստանում այդ սրբազան ծառերից և թփերից շատ կան, որոնցից աչքի են ընկնում դլխաւորապէս սխկին, կաղնին, տանձին, նարբանդը, մասրին և այլն։ Սոքա բուսնում են սրբոց ուխտատեղիներում կամ մի այնպիսի վայրերում, ուր այժմ հնութեան հետք անդամ չը կայ։ Անտարակոյս կար ժամանակ որ այդ տեղերում գտնուում էր հեթանոսական մի սրբավայր, ուր ընտադալ ժամանակում եկեղեցի են կանդնեցրել. իսկ եթէ չեն չինել աղօթատեղիք՝ ժողովուրդն աւանդութեամբ շարունակել է յաճախել այդ տեղերն և արտայայտել իւր մեծարանքը։ Այդ ուխտատեղիներում սրբազան ծառերի տուների տակ ուխտաւորները զովանում են, մանաւանդ որ ուխտադնացութիւնն էլ կատարուում է ամառ ժամանակ։ Ուստի և ժողովուրդի մէջ աւանդութիւն է մնացել որ այն սուրբն էլ շոգ ժամանակ նոյն ծառի տակն է զովացել։

Այդ սրբավայրերում գտնուած ծառերն առհասարակ անձեռնմխելի են վանքում կամ եկեղեցում չը ծառայող օտարների համար։ Եւ եթէ մին վստահանալ նոյանից մի ոստ կտրել՝ սուրբը նորան կը պատժէ, կտրած ոստը նորա ձեռքին կը կպչի։ Եւ այդ պատուհասից աղատուել նա կարող է միայն վերադարձնելով տարածը հանդերձ զոհաբերութեամբ։ Գետնի վերայ ընկած ծառի չորացած ճիւղերն սնդամ ոչ ոք չէ վստահանում տանել և միայն թոյլ են տալիս գործածելու զոհի համար։

---

[1] Գրոց-լրոց. երես 12։

Իհարկէ պէտք է չկարծել որ այդ ծառերը պաշտելի են ոչ իբրև ծառեր, այլ իբրև օթևան ժողովրդի որ և է աստուածութեան, կամ իբրև ներհականութիւն աստուածների։ Սորա ապացոյցն այն է, որ ուր ժողովուրդը քրիստոնէութեան ժամանակ չը կարողացաւ իւր հեթանոսական կուռքի փոխարէն Աստուծու տաճար կանգնեցնել, այնտեղ նա ծառի վերայ մեխել է կամ նորա խոռոչի մէջ պահել է մի խաչ կամ սրբոց պատկեր։

Քրիստոնէութեան տարածուելու միջոցին շատ տեսակ ծառեր կորցրին իրանց հեթանոսական աւանդութիւնները տեղի տալով այն վէպերին և աւանդութիւններին, որոց իմաստը վերցրած է Աւետարանից։ Օրինակի համար՝ Հին Նախիջևանի ժողովրդի մէջ փշատի ծառի մասին հետևեալ աւանդութիւնը կայ։ Մի անգամ Յովհաննէս Մկրտիչ պատահել է փողոցում Ս. Կոյս Մարիամին։ Ս. Աստուածածինը տեղ չը գտնելով իւր կնքահայր Յովհաննէսից թագնուելու, մտնում է փշատի ծառի տակ, որ կռացնելով իւր ճիւղերը ծածկում է Նորան Մկրտչի աչքից։ Այդ պատճառով, ասում է աւանդութիւնը, փշատի ծառի երբեմն վեր նայող ճիւղերը մինչև այս օրս դէպի վայր են ուղղուած։

Այս աւանդութիւնն անշուշտ հիմնւում է այն սովորութեան վերայ, որ գոյութիւն ունի շատ հայաբնակ տեղերի մէջ, պահանջելով սանամայրից կնքահօրը տեսնելիս թագ կենալ։

Ղազախու և Լօրւայ գաւառների ժողովրդի բերնում պտտում է մի աւանդութիւն գենի ծառի մասին։ Այդ ծառը սուրբ է համարւում նորա համար, որ հրէաներից հալածուած ժամանակ Քրիստոս փախչելով մտնում է գենի անտառն և պահւում նորա խիտ ճիւղերի տակ, և այդպիսով հրէաներից ազատուելով, Քրիստոս անտառից դուրս է գալիս, օրհնում գենի ծառն ասելով՝ օրհնեալ լինիս գենի և միշտ կանաչ ու անուշ հոտը քեզանից անպակաս լինի։ Այս պատճառով, ասում է աւանդութիւնը, գենին միշտ կանաչ է և նորա փայտից անուշ հոտ է բուրում։

Ծխախոտի մասին պատմում են թէ իբր երբ Քրիստոս քարոզելով շրջում էր դաշտերում, ամեն խոտ երկրպագութիւն էր տալիս Նորան, իսկ ծխախոտի տերևները Նրան տեսնելիս ամենևին չէին շարժւում։ Այդ պատճառով Յիսուս անիծում է այդ բոյսն ասելով՝ «յաւիտեան քո տերևներն այրուին» և այն օրից մարդիկ ծխելով այրում են ծխախոտը։

Դեռ. մինչև այժմ մեր մէջ Քրիստոսի պայծառակերպութեան տօնը կոչւում է հեթանոսական անունով՝ վարդավառ, որ նուիրուած էր Աստղիկ դիցուհուն և հնագոյն սովորութեամբ այժմ տօնւում է այն ժամանակից միացած պարագաներով։ Այս տօնի ժամանակ, ինչպէս յայտնի է, ծաղիկները մեծ դեր են կատարում և նոցա օգնութեամբ ժողովուրդը գուշակում է իւր բաղդը։ Ներկայումս ամենայն ծաղիկ անխտիր գործ է դրւում այդ միջոցին, թէև հին ժամանակում պէտք է կարծել, որ սորա համար նշանակած էին որոշ ծաղիկները միայն։ Սակայն մի քանի տեղերի վերա—

բերութեամբ կարելի է որոշել որ յայտնի անուշահոտ դեղին բարձմանուկը (ջանփուլումի ծաղիկը) վերջին ժամանակ առաջին անգամ է բռնում այդ ծաղիկների կարգում։ Նոյնպէս Ղազախու բնակիչների մէջ սովորութիւն կայ այդ տօնին եզան ճակատը ծաղկափնջով զարդարելու և այդ ծաղկափունջը գլխաւորապէս կազմւում է հոշոշից։ Այսպէս զարդարուած եզներին առաջն առած՝ ժողովուրդը գնում է դէպի սրբի դուռը։

Համբարձման տօնի նախընթաց երեկոյին կէս գիշերից յետոյ ժողովուրդն ընդունում է որ բոլոր ծաղիկները խօսում են միմեանց հետ, յայտնելով այդ միջոցին այն թէ իրանք ինչ ցաւերի և հիւանդութիւնների համար կարող են դեղ դառնալ, կամ թէ չէ գուշակում են այդ միջոցին մի տեսակ իմանալ նոցա խօսակցութիւնը և գուշակել իրանց բաղդը։

Ծաղիկներով հմայութիւնը կար և՛ հին ժամանակում։ Թէոկրիտոսը պատմում է որ նոցա օրով յոյները հմայութիւնը կատարում էին խաշխաշի թերթով։ Նոքա վերցնում էին այդ թերթն և դնում մի ձեռքի բթամատի և ճկոյթի վերայ և միւս ձեռքով վրան խփում. եթէ այս միջոցին թերթը ճայթում էր՝ նշանակում էր որ հմայած անձնաւորութիւնը սիրում է նորան, եթէ ոչ՝ չէ սիրում։ Այս տեսակ հմայութիւն կայ և մեր մէջ. սորա համար վերցնում են սիրի-սիրի ծաղիկը և մի մի հատ նորա ծաղիկները պոկելով, ասում են՝ սիրում է, չէ սիրում. այս պատճառով էլ ծաղիկը ստացել է իւր այժմեան անունը։ Ս. Գիւլզատեանցի «Հօրուա-Մօրուա» ոտանաւորի մէջ այս ծաղկի մասին ասած է՝

Բացւիր ծաղիկ, սէր-սիրիկ,
Բացւիր, քաղի քեզ մատիկ,
Վիճակ ձգի իւր բաղդիկ
Մեր գեղերի խեղճ աղջիկ։

Սոյն տեսակ հմայութիւն կատարում է Գէօթէի Մարգարիտը «Ֆաուստի» մէջ, երբ նա ծաղկի թերթերը մէկ մէկ պոկելով «սիրում չէ, սիրում է» կրկնում։

Բաղդը գուշակելու համար հայերի մէջ կան էլի ուրիշ բոյսեր։ Մի բազմածաղիկ բոյսի ճառագայթաձև ծաղիկները մի մի հատ պոկելով հմայողն ասում է՝ ապրիմ—չ'ապրիմ, և ծաղիկն էլ ստացել է իւր անունը, կոչւելով «ապրիմ—չապրիմ»։ Նոյնպէս հմայում են երեքնուկ՝ երեք տերև ունեցող բոյսով. եթէ հմայողն այդ բոյսի վերայ չորս տերև գտնէ, իւր բաղդի գուշակութիւնը կատարուած է համարում։ Այս բոյսի մասին Վասպուրականի բնակիչներն և՛ ուրիշ աւանդութիւն էլ ունին, որ յիշում է Գ. Ե. Սրւանձտեանցը «Մանանայ» գրքի 112 երեսում։ «Երեքնուկ խոտ, որ երեք տերև ունի և որ յաճախ ամեն տեղ կը գտնւի, մուրիկ մուրիկ կը փնտռեն անոնց մէջէն բոյս մը, որ չորս տերև ունենայ խաչաձև. և այնուհետև ազատ կը լինին զայն իրանց վրայ պահողներն ամեն չարէ և կախարդանքէ»։

Ծաղիկները նոյնպէս ունին իրանց վէպը. Նոքա առհասարակ ներկայացնում են՝ մէկը քոյր, միւսն եղբայր. կամ երկու քոյր մէկը մայր, մէկը կնքահայր, միւսը սանամայր. մէկը տէրտէր՝ միւսը տիրուհի, մէկը սիրողը՝ միւսը սիրուած, երկու սրբ եղբայր. մէկը արնոտ սիրտ՝ միւսը օձի թուր կամ մխած խանջալ. մէկը կթոց մի կաթն է սպիտակ և անարատ, միւսը թոյն թափող հրեղէն վիշապ և այլն [1]։

Կուժկոտրուկ ծաղկի մասին ասում են աւանդաբար, թէ ով այս ծաղիկը քաղէ, նորա տան կուժը և միւս ամանները կը կոտրատուին։

Հայաստանի լեռնային կողմերում բուսնող վառվռուկ բոյսի մասին հետևեալ աւանդութիւնը կայ. Եթէ որ և է հնարով կարելի լինի, չափշտակելով այս բոյսը կրիայից, ձգել դարանակալ մարդու կուրծքում նորա քնած ժամանակ, իսկոյն և եթ այդ բոյսը կը հանէ մարդու սրտից նենգաւոր չարութիւնները, եթէ միայն նա իւր սրտի մէջ հղացել է այդ չարութիւնները գործելու։ Ասում են նոյնպէս, որ եթէ այդ բոյսը դնեն որ և է դոց երկաթէ կողպէքի վերայ, կողպէքն առանց բանալիքի կը բացուի։

Կինամոնի (դարչինի) մասին աւանդութիւնն ասում է, որ եթէ մէկն այդ բոյսը դնէ քնած մարդու շրթունքի վերայ և բան հարցնէ, պատասխան կը ստանայ նորանից։

Խարթութի ծառը շատ տխուր տեսք ունի և այդ պատճառով ժողովուրդը տարաբաղդութեան նշան է համարում այդ ծառը։ Աշխատում են այգումն այդ ծառը տանից հեռու տնկել։

Խաչապսակ բոյսերից կայ մի փոքրիկ բոյս, որ մեղանում կոչւում է չանգ և թաթիկ։ Այս բոյսը ժողովրդի մէջ պտտող աւանդութեամբ խորհրդաւոր է համարւում։ Հիւսիսային Աֆրիկայի և Պաղեստինէի չոր հովիտներում, նոյնպէս Արաբիայի աւազոտ անապատում այդ բոյսը վայրենի է։ Ջանգը փոքրիկ թուփ է հինգ կամ վեց չօդաչափ (դիւմ) բարձրութեամբ։ Ծաղկի թափելուց յետոյ բոյսը տերևաթափ է լինում, ոստերը չորանում են, դէպի ներս են ոլորւում և ամբողջ բոյսը մի գնդաձև բան է դառնում։ Այդ միջոցին բոյսն իւր արմատով դիւրութեամբ պոկւում է գետնից և անապատի միջով գլորւելով, հասնում է մինչև խոնաւ տեղը։ Երբ դիպչում է ջրին, իսկոյն ուղղւում է, ստանալով իւր նախկին ձևը։ Բոյսի խոնաւութիւնից ուղղւելու յատկութիւնն առիթ է տւել այն աւանդութեան կազմւելու, թէ նա փթթում է Փրկչի ծննդեան օրն և այդ պատճառով նա կոչւում է Մարիամի վարդ, իսկ Ս. Գրոց մէջ անւանւած է վարդ Երիքովի [2]։

Աւանդութիւնն ասում է, որ Ս. Մարիամ Կոյսն երկանց ժամանակ բռնել է այդ բոյսն և աղաչել է Մանուկ Քրիստոսից։ Մեր հասարակ

---

[1] «Գրոց-Բրոց». երես 35.

[2] «Իբրև զարմաւենի բարձրացայ յԵնգադս և իբրև զտունկ վարդենւոյ յԵրիքով»։ Սիրաք. Իդ. 18.

տատմայրերը մեծ փող են ծախսում այդ բոյսը Պաղեստինէից բերել տալու համար, որովհետև իբրև միջոց գործ են ածում ծանր երկանց ժամանակ։ Այդ ժամանակ նոքա ձգում են այդ բոյսը ջրի մէջ. բոյսը խոնաւութիւնից ուռչում է և նոքա յոյս են տալիս ծննդականին յաջողութեամբ ազատուելու. յետոյ այդ ջրից քիչ քիչ խմեցնում են նորան, իբրև երկունքը թեթևացնելու միջոց, թէպէտ ինքը բոյսը չունի բժշկարար յատկութիւն։

Հայաստանում կայ աղբերաց արիւն կոչուած մի փոքր վարդաձև, վառվռուն, մուգ կարմրագոյն ծաղիկ։ Գուսանաց երգերի մէջ նմանեցնելով այդ ծաղիկը սիրելոյն, ասում են՝

Ա՛յ աղբերաց արիւն՝
Որ բուսար մեջ քարերուն,
Աչուիդ ի Նարկիզ նման,
Մէկն ի քուն ու մէկ արթուն։

Կայ նոյնպէս Համասպրամ կամ Համասփիւռ անունով մի բոյս։ Սորա ծաղիկները պայծառ են և պէսպիսագոյն։ Բուսնում է քարոտ լերանց ծործորում և մի որոշեալ օր երևում է գիշերանց լուսնի լուսով։ Աւանդութեամբ սա մեծ զօրութիւն ունի, մինչև անգամ իբր սա մարդուն սրամտութիւն է պարգևում [1]։ Սորա մասին կայ մի ուրիշ աւանդութիւն ևս, որ ասում է թէ սորա ծաղիկն ուտողը կամ իւղի հետ խառնած իւր անդամներին քսողը կը խօսի ամենայն ազգաց լեզու և կը լցւի ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ։ Մի ուրիշ տեղում էլ ասած է՝

Այն Համասփիւռ ծաղիկն որ կայ, ծաղկել ծառով հազարագոյն.
Կոյր աչերուն լոյս կու բերէ, իթէ Տէրն տայ Ադամորդւոյն.
Երկոտասան արմատ ունի, բուսնի երկոտասան տարւոյն.
Ամեն թփին գոյն մի ծաղիկ, մարդ կու մալլի անուշ հոտոյն.
Արքայիկն Օձն է թագաւոր, ինքն սպիտակ որպէս զձիւն,
Համասփիւռին կու հետևի և զօրութիւն կառնու հոտոյն [2]։

Պէտք է յիշել և այն, թէ ծաղիկներն այնքան մեծ պատիւ են վայելելիս եղել հայերի մէջ, որ մեր գեղեցիկ սեռը նոցանից մի քանիսի անունները է կրում. Շուշան, Նարգիզ, Ռէհան, Մանուշակ, Համասփիւռ, Անթառամ, Վարդիթեր և այն թէ հին և թէ նոր ժամանակներում մեր կանանց սովորական անուններն են։

---

[1]) Ցուցիկ Հայրենեաց Հայոց. Ղ. Վ. Ալիշան, Հատոր ա, երես 52.
[2]) Համով-Հոտով. «Գովասանք ծաղկանց» երես 278.